

## ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ (ՀՀ ՎՊԽ) ՆԻՍԵՐ

**12.03.2011թ. նիստին**

### **Մասնակցում էին՝**

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ Գ. Անանյանը, Գ. Գևորգյանը, Յու. Պողոսյանը, Ա.Շաբոյանը, Վ. Դավթյանը, Ա. Աղազարյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար Հ.Գրիգորյանը:

### **Հրավիրված էին՝**

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ. Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի առաջատար մասնագետ Գ. Հովսեփյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ Լ.Պետրոսյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարդահամարի պլանավորման և ծրագրամեթոդաբանական բաժնի պետ Գ. Նշանյանը:

### **Նիստում լսվեց հետևյալ հարցը.**

«Հայաստանի Հանրապետությունում 2011 թվականի մարդահամարի կազմակերպչական և մեթոդաբանական հիմնական դրույթները», «ՀՀ ազգային վիճակագրական ծառայության մարզային և Երևան քաղաքի գործակալություններում մարդահամարի աշխատանքները համակարգողի պարտավորությունները», «Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մարդահամարի ընթացքում քաղաքներում և խոշոր գյուղերում տների (շինությունների) ցուցակները կազմելու կարգի հրահանգը», «Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մարդահամարի ընթացքում գյուղական համայնքներում բնակավայրերի և դրանցում տնային տնտեսությունների ցուցակները կազմելու կարգի հրահանգը», «Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մարդահամարի ընթացքում տների (շինությունների) և գյուղական համայնքների ցուցակների կազմման և ընդունման կարգի մասին ցուցումները» և «Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մարդահամարն անցկացնելու կազմակերպչական պլանները կազմելու կարգի մասին ցուցումները» հաստատելու մասին հարցը:

*/Զեկուցող՝ Գ.Նշանյան/*

**Որոշվեց՝**

Հաստատել

- «Հայաստանի Հանրապետությունում 2011 թվականի մարդահամարի կազմակերպչական և մեթոդաբանական հիմնական դրույթները»,
- «ՀՀ ազգային վիճակագրական ծառայության մարզային և Երևան քաղաքի գործակալություններում մարդահամարի աշխատանքները համակարգողի պարտավորությունները»,
- «Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մարդահամարի ընթացքում տների (շինությունների) և գյուղական համայնքների ցուցակների կազմման և ընդունման կարգի մասին ցուցումները»,
- «Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մարդահամարն անցկացնելու կազմակերպական պլանները կազմելու կարգի մասին ցուցումները»:

*/Անհատական/*

- «Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մարդահամարի ընթացքում քաղաքներում և խոշոր գյուղերում տների (շինությունների) ցուցակները կազմելու կարգի հրահանգը»,
- «Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մարդահամարի ընթացքում գյուղական համայնքներում բնակավայրերի և դրանցում տնային տնտեսությունների ցուցակները կազմելու կարգի հրահանգը»:

*/Նորմատիվ/*

**30.03.2011թ. նիստին**

**Մասնակցում էին՝**

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ. Անանյանը, Գ. Գևորգյանը, Յու.Պողոսյանը, Վ. Դավթյանը, Ա. Աղազարյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար Հ.Գրիգորյանը:

**Հրավիրված էին՝**

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ. Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի առաջատար մասնագետ Գ. Հովսեփյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և

դասակարգիչների բաժնի պետ Լ.Պետրոսյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի պետ Գ. Մարտիրոսյանը:

***Նիստում լսվեց հետևյալ հարցը.***

«Հայաստանի Հանրապետությունում 2011 թվականին սպառողական գների ինդեքսների հաշվարկման համար սպառողական զամբյուղի կշիռները (2010 թվականը որպես բազիսային տարի) հաստատելու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Գ.Մարտիրոսյան/*

***Որոշվեց՝***

Հաստատել 2011 թվականի սպառողական գների ինդեքսի հաշվարկման համար նոր սպառողական զամբյուղի կազմը և կառուցվածքը և սպառողական գների ինդեքսի հաշվարկների համար որպես բազիսային տարի սահմանել 2010 թվականը:

*/Անհատական/*

***08.04.2011թ. նիստին***

***Մասնակցում էին՝***

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ. Անանյանը, Գ. Գևորգյանը, Յու. Պողոսյանը, Վ. Դավթյանը, Ա. Աղազարյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար Հ.Գրիգորյանը:

***Հրավիրված էին՝***

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ. Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավար Ա.Հայրապետյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի առաջատար մասնագետ Գ.Հովսեփյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ Լ.Պետրոսյանը:

***Նիստում լսվեց հետևյալ հարցը.***

«Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2009 թվականի նոյեմբերի 9-ի թիվ 37-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Ա.Հայրապետյան/*

**Որոշվեց՝**

- Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 09.11.2009 թվականի «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկին հանձնվող գույքի կազմը և չափը հաստատելու մասին» թիվ 37-Ա որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի 3-րդ տողի «55178.3» թիվը փոխարինել «66268.3» թվով:
- ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել տրանսպորտային միջոցների գրանցման, պետհամարանիշների տրամադրման և այլ աշխատանքների կատարումը:  
*/Անհատական/*

**15.04.2011թ. նիստին**

**Մասնակցում էին՝**

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ Գ. Անանյանը, Գ. Գևորգյանը, Յու. Պողոսյանը, Վ. Դավթյանը, Ա. Աղազարյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար Հ.Գրիգորյանը:

**Հրավիրված էին՝**

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ. Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի առաջատար մասնագետ Գ. Հովսեփյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի գլխավոր մասնագետ Ա. Դաշյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա.Սաֆյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարդահամարի պլանավորման և ծրագրամեթոդաբանական բաժնի պետ Գ. Նշանյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարդահամարի վարչության աշխատակիցներ Վ. Գևորգյանը, Ա. Յաղուբյանը, Ա. Սարգսյանը, Լ. Գևորգյանը, Գ. Մելիքսեթյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ.Կույումջյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի պետ Գ. Մարտիրոսյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի արդյունաբերության վիճակագրության բաժնի պետ Ա.Անանյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի գլխավոր մասնագետ Հ. Եղիազարյանը, ՀՀ ԱՎԾ

աշխատակազմի տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության տվյալների բանկերի մշակման և ծրագրավորման բաժնի գլխավոր մասնագետ Ա. Մարտիրոսյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության տվյալների բանկերի մշակման և ծրագրավորման բաժնի 1-ին կարգի մասնագետ Կ.Եսայանը:

***Նիսպում լավեցին հեղուկալ հարցերը.***

1. «Հայաստանի Հանրապետությունում 2011 թվականին անցկացվելիք մարդահամարի ընթացքում «Քաղաքներում հաշվարարի», «Գյուղական վայրերում հաշվարարի», «Քաղաքներում հրահանգիչ-հսկիչի», «Գյուղական վայրերում հրահանգիչ-հսկիչի», «Մարդահամարի տեղամասի վարիչի և նրա օգնականի» հուշատետրերը, «Քաղաքային հաշվային տեղամասի», «Գյուղական վայրի հաշվային տեղամասի», «Հրահանգչական տեղամասի», «Մարդահամարի տեղամասի», «Մարզի (տարածքի)» ամփոփ տեղեկագրերը, «Մարդահամարի հարցաթերթում գրառվածների թվաքանակն ըստ առանձին բնակավայրերի» ձևաթուղթը, «Հայաստանի Հանրապետությունում 2011 թվականի մարդահամարի անցկացման ընթացքի մասին հրահանգիչ-հսկիչի», «Մարդահամարի տեղամասի վարիչի», «ՀՀ ԱՎԾ մարզային գործակալության տարածքային բաժնի պատասխանատու անձի» և «ՀՀ ԱՎԾ մարզային գործակալության պետի հաղորդագրության ձևերը» հաստատելու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Գ.Նշանյան/*

***Որոշվեց՝***

Հաստատել «Քաղաքներում հաշվարարի», «Գյուղական վայրերում հաշվարարի», «Քաղաքներում հրահանգիչ-հսկիչի», «Գյուղական վայրերում հրահանգիչ-հսկիչի», «Մարդահամարի տեղամասի վարիչի և նրա օգնականի» հուշատետրերը, «Քաղաքային հաշվային տեղամասի», «Գյուղական վայրի հաշվային տեղամասի», «Հրահանգչական տեղամասի», «Մարդահամարի տեղամասի», «Մարզի (տարածքի)» ամփոփ տեղեկագրերը, «Մարդահամարի հարցաթերթում գրառվածների թվաքանակն ըստ առանձին բնակավայրերի» ձևաթուղթը, «Հայաստանի Հանրապետությունում 2011 թվականի մարդահամարի անցկացման ընթացքի մասին հրահանգիչ-հսկիչի», «Մարդահամարի տեղամասի վարիչի», «ՀՀ ԱՎԾ մարզային գործակալության տարածքային բաժնի պատասխանատու անձի» և «ՀՀ ԱՎԾ մարզային գործակալության պետի հաղորդագրության ձևերը» համաձայն հավելվածների:

*/Անհատական/*

2. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

2.1. Հաղորդում՝ Հնդկաստանի Նյու Դելի քաղաքում 2011թվականի փետրվարի 8-ից 16-ը «Հնդկաստանի մարդահամարների կազմակերպման ու անցկացման փորձի ուսումնասիրությանը նվիրված դասընթացներին» մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցողներ՝ Վ. Գևորգյան, Գ. Նշանյան, Ա. Յաղուբյան, Ա. Սարգսյան, Լ. Գևորգյան, Գ. Մելիքսեթյան/*

2.2. Հաղորդում՝ Ֆրանսիայի Փարիզ քաղաքում 2011թվականի փետրվարի 14-ից մարտի 4-ը «Մահացությունը և դրա պատճառները Կովկասյան երկրներում» ծրագրի շրջանակում աշխատանքային հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Կ. Կույումջյան/*

2.3. Հաղորդում՝ Բելգիայի Բրյուսել քաղաքում 2011 թվականի փետրվարի 22-ից 24-ը «Նոր տեխնիկա և տեխնոլոգիաներ վիճակագրության համար» խորագրով կոնֆերանսին մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցողներ՝ Վ. Դավթյան, Հ. Եղիազարյան/*

2.4. Հաղորդում՝ ԱՄՆ-ի Նյու Յորք քաղաքում 2011 թվականի փետրվարի 22-ից 25-ը «ՄԱԿ-ի վիճակագրական հանձնաժողովի 42-րդ նստաշրջանին» մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցողներ՝ Ս.Մնացականյան, Ա.Սաֆյան/*

2.5. Հաղորդում՝ Վրաստանի Հանրապետություն Թբիլիսի քաղաքում 2011 թվականի մարտի 9-ից 12-ը «2011թ. ցուցանիշներով միջազգային գլոբալ համադրումների ծրագրի շրջանակում միջազգային երկկողմ համադրումների աշխատանքների իրականացման համար Վրաստանի ազգային վիճակագրական գրասենյակի մասնագետներին մեթոդաբանական օժանդակության ցուցաբերում: 2011-2013թթ. համատեղ աշխատանքային գործունեության ծրագրի մշակում» թեմայով հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Գ. Մարտիրոսյան/*

2.6. Հաղորդում՝ Ղազախստանի Աստանա քաղաքում 2011 թվականի մարտի 14-ից 17-ը ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի կողմից կազմակերպված «Կարճաժամկետ տնտեսական վիճակագրություն և սեզոնային տատանումների ճշգրտում» թեմայով սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Ա. Անանյան/*

2.7. Հաղորդում՝ Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաքում 2011 թվականի մարտի 23-ից 25-ը ԱՊՀ վիճակագրական ծառայությունների ղեկավարների խորհրդի 45-րդ նիստին (մարտի 24-25-ին), ինչպես նաև 2011թ. տվյալներով միջազգային գլոբալ համադրումների ծրագրի շրջանակում ԱՊՀ երկրներում միջազգային համադրումների աշխատանքների իրականացման համար ներդրումային, շինարարական ապրանք-ծառայություն ներկայացուցիչների քննարկման և համաձայնեցման նպատակով աշխատանքային սեմինար-խորհրդակցությանը (մարտի 23-25-ին) մասնակցելու վերաբերյալ:

*/Ջեկուցողներ՝ Ս.Մնացականյան, Գ. Մարտիրոսյան/*

2.8. Հաղորդում՝ Հնդկաստանի Հանրապետության Նյու Դելի քաղաքում 2011 թվականի մարտի 28-ից 31-ը «Դեվիճոն ընդլայնված ուսուցում 9» թեմայով դասընթացին մասնակցելու վերաբերյալ:

*/Ջեկուցողներ՝ Ա. Մարտիրոսյան, Կ. Եսայան/*

### **Որոշվեց՝**

Արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումներն ընդունել ի գիտություն:

*/Անհատական/*